ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/113

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ. Ծառուկյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա055384)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11021-2019 գրությամբ «Աշխատանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/974-2019 գրության հիման վրա, 02.07.2019թ. թիվ 26/26-1/11021-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Աշխատանք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աշխատանք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Աշխատանք» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Աշխատանք» ՍՊԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝ առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը: Մասնավորապես, «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են նախկինում կատարած պայմանագրերի և դրանց հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ տեղեկանքը:

«Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Հրավերի Հավելված 5-ը /առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում/, Հավելված 5.1–ը /կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին տեղեկանք /Հավելված 5.2-ը/ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև Հավելված 5.2-ի աղուսյակի 5-րդ սյունակում/ գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը/ հստակեցված չէ աշխատակցի գործունեության ոլորտները և կատարած աշխատանքները: Բացակայում է «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատակցի մասնագիտական որակավորումը հավաստող դիպլոմի պատճենը: Որպեսզի հնարավոր լինի պարզել հրավերով պահանջվող լիցենզիայի էներգետիկ ներդիրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը, անհրաժեշտ է ներկայացնել 15.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագի հ1 Համաձայնագրով նախատեսված և 2016թ. իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 03.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագի հ2 Համաձայնագրով նախատեսված և 2016թ.ին իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 16.02.2017թ. կնքված ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով սահմանված աշխատանքներից շինարարական մասի կատարողական ակտերը: 07.07.2017թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող գրության:

Այդ կապակցությամբ գնահատող հանձնաժողովի որոշմամբ նույն օրը տեղի ունեցած նիստը կասեցվել է և հրավերով սահմանված պահանջների համաձայն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը. «Աշխատանք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությանը, մասնավորապես՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագի հ1 Համաձայնագրով, ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագրի հ2 Համաձայնագրով, ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով և ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով՝ սույն հրավերով սահմանված «էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից, ինչպես նաև «Աշխատանք» ՍՊԸ-ի

կողմից անհամապատասխանությունների շտկման ժամանակ ներկայացվել է ՍԲԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով պայմանագրի հանձման-ընդունման արձանագրությունը, հարկային հաշիվը, տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, սակայն բացակայում էր ՍԲԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով պայմանագիրը, ինչն էլ չի քննարկվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԱԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոնշյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 48–րդ կետը, որոշեց մերժել «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պար¬բերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանութ-յուններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը…:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում «Էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում իրականացված համապատասխան աշխատանքների կատարման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Այսպիսով, «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը: Մասնավորապես, «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են նախկինում կատարած կապալային աշխատանքների պայմանագրերի և դրանց հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ տեղեկանքը:

Սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես արձանագրվել է հետևյալը. «Որպեսզի հնարավոր լինի պարզել հրավերով պահանջվող լիցենզիայի էներգետիկ ներդիրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը, անհրաժեշտ է

ներկայացնել 15.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագի հ1 Համաձայնագրով նախատեսված և 2016թ. իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 03.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագի հ2 Համաձայնագրով նախատեսված և 2016թ.ին իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 16.02.2017թ. կնքված ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով սահմանված աշխատանքներից շինարարական մասի կատարողական ակտերը»:

Պահանջված պայմանագրերի կատարողական ակտերը ներկայացնելուց հետո ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալը. «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագի հ1 Համաձայնագրով, ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագրի հ2 Համաձայնագրով, ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով և ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով՝ սույն հրավերով սահմանված «էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից:

Այս հիմքով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը միանգամից մերժել է «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից այս ընթացակարգի շրջանակներում թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, ինչի արդյունքում «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը ոչ իրավաչափ մերժվել է, իսկ վերոհիշյալը իր հերթին կանգնեցրել է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու վտանգ:

Նախ, ինչպես նշվել է, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետով պահանջված նախկինում կատարած կապալային աշխատանքների կատարման պայմանագրերի և դրանց հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ տեղեկանքը: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվել է ներկայացնել նաև

այդ պայմանագրերի կատարողական ակտերի պատճենները, ինչը ներկայացնելու պարտավորություն «Աշխատանք» ՍՊԸ-ն չի կրել, քանի որ Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետով (դրա մասին նշված է համապատասխան արձանագրությամբ)՝ «Աշխատանք» ՍՊԸ-ից պահանջել է ներկայացնել պայմանագրերի կատարողական ակտերի պատճենները: Մինչդեռ Կարգի 47-րդ կետը հստակ սահմանում է, որ բացառապես հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը իրավունք ունի ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մինչդեռ վերոհիշյալ վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ կատարողական ակտերի բացակայությունը չէր կարող գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել որպես հրավերի պահանջների նկատմամբ անհապատասխանություն, քանի որ Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այսինքն պայմանագրերի և դրանց հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ տեղեկանքը

Այնուամենայնիվ, Կարգի 47-րդ կետով նշված շտկման ծանուցմամբ գնահատող հանձնաժողովը հայտնել է, որ որպեսզի հնարավոր լինի պարզել հրավերով պահանջվող լիցենզիայի էներգետիկ ներդիրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը՝ անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրերի կատարողական ակտերը: Վերոհիշյալից ուղղակի հետևում է, որ կատարողական ակտերի ներկայացումը չէր կարող դիտարկվել որպես Կարգի 47-րդ կետով սահմանված շտկման պահանջ: Այնուամենայնիվ, ստանալով «Աշխատանք» ՍՊԸ-ից Հրավերով չնախատեսված փաստաթղթեր՝ կատարողական ակտեր և դրանց հիման վրա փորձելով գնահատել ներկայացված պայմանագրերի համանմանության հարցը և վերջիններիս համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, գնահատող

հանձնաժողովը, արձանագրել է, որ նշված պայմանագրերը չեն կարող համարվել համանման, քանի որ ներկայացված կատարողական ակտերից պարզ է դառնում, որ կոնկրետ էներգետիկ լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքը ծավալային առումով պակաս է պահանջվածից: Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն ուղղակի պարտավոր էր, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետով, հնարավորություն տալ «Աշխատանք» ՍՊԸ-ին՝ ներկայացնելու այլ համանման պայմանագրեր, ինչը տվյալ դեպքում չի կատարվել: Ըստ երևույթի, գնահատող հանձնաժողովը պայմանագրերի կատարողական ակտեր ներկայացնելու պահանջն արդեն դիտարկել է որպես Կարգի 47-րդ կետով սահմանված մասնակցի կողմից շտկում կատարելու հնարավորություն, ինչն ակնհայտ է, որ որպես այդպիսին չի կարող դիտարկվել վերոշարադրված հիմնավորմամբ, դրանից հետո պարզելով, որ ներկայացված պայմանագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, այլևս Կարգի 47-րդ կետով սահմանված շտկում կատարելու հնարավորություն չի ընձեռնել «Աշխատանք» ՍՊԸ-ին, իբրև թե շտկման հնարավորությունը մասնակցի կողմից արդեն սպառած լինելու հիմքով: Մինչդեռ հենց գնահատող հանձնաժողովը շտկման ծանուցման մեջ նշել է հետևյալը. «Պարզելու համար հրավերով պահանջվող լիցենզիայի էներգետիկ ներդիրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը՝ անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրերի կատարողական ակտերը»: Վերոհիշյալից պարզ է դառնում կատարողական ակտեր ներկայացնելու պահանջը պայմանավորված է ուսումնասիրություն կատարելու անհրաժեշտությամբ: Եվ փաստորեն ուսումնասիրելով և գտնելով, որ ներկայացված պայմանագրերը համանման չեն, գնահատող հանձնաժողովն ուղղակի պարտավոր էր հնարավորություն ընձեռնել Ընկերությանը՝ շտկում կատարել և ներկայացնելու այլ պայմանագրեր, ինչը տեղի չի ունեցել: Վերոհիշյալի արդյունքում խախտվել է «Աշխատանք» ՍՊԸ-ին Կարգի 47-րդ և 48-րդ կետերով տրված շտկում կատարելու հնարավորությունը:

«Աշխատանք» ՍՊԸ-ն առարկում է նաև Ընկերության հայտը մերժելու հիմքի դեմ: Մասնավորապես, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված կապալային աշխատանքների պայմանագրերը, գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է ներկայացված կատարողական ակտերը և դրանց միջից հանելով էներգետիկ լիցենզիայի

շրջանակներում իրականացված աշխատանքները, գումարել է դրանք և արդյունքում արձանագրել, որ պայմանագրերի մեջ «էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված կապալային աշխատանքների պայմանագրերը իրականացվել են միաժամանակ երկու լիցենզիայի շրջանակներում՝ քաղաքացիական և էներգետիկ: Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Ընկերությունը գտնում է, որ հիմք ընդունելով Կարգի 65-րդ կետի պահանջները՝ անհրաժեշտ էր Ընկերության ներկայացված գործարքները՝ այսինքն պայմանագրերը, գնահատել իրենց ամբողջության մեջ, քանզի այդ գործարքները իրականացվել են համապատասխան լիցենզիայի շրջանակներում: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը կամայականորեն պայմանագրից հանել է համապատասխան հատվածներ և գնահատել պայմանագրերի մի մասը, իսկ Կարգի 65-րդ կետով գնահատման է ենթակա ամբողջ գործարքը, ոչ թե մի մասը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը խնդրել է «Աշխատանք» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Աշխատանք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/113 ընթացակարգի շրջանակներում 11.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/974-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման (օդափոխության համակարգերի նորոգման) աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթում «Աշխատանք» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Աշխատանք» ՍՊԸ-ին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Աշխատանք» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն դրանց մեջ առկա են եղել անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ սահմանված կարգով www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցվել է «Աշխատանք» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Աշխատանք» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությանը: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/113 ընթացակարգի շրջանակներում 11.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշխատանք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 17.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11021-2019

գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/974-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել

հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման

արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի

պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշխատանք» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 5 599 200 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 17.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ որպեսզի հնարավոր լինի պարզել հրավերով պահանջվող լիցենզիայի էներգետիկ ներդիրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքն անհրաժեշտ է ներկայացնել. 15.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագրի N 1 համաձայնագրով նախատեսված և 2016թ. իրականացված աշխատանքների կատարողական ակտերը, 03.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագրի N 2 համաձայնագրով նախատեսված և 2016թ. իրականացված աշխատանքների կատարողական ակտերը: 16.02.2017թ. կնքված ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով սահմանված աշխատանքներից շինարարական

մասի կատարողական ակտերը: 07.07.2017թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող գրությունը:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկվել են անհամապատասխանությունները, բացառությամբ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունների, մասնավորապես՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված ՍԸԱՇՁԲ-10/41-2 պայմանագրի N 1 համաձայնագրով, ՍԸԱՇՁԲ-10/35-1 պայմանագրի N 2 համաձայնագրով, ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 պայմանագրով և ՍԸԱՇՁԲ-10/9-4 պայմանագրով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված «էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը գումարային արտահայտությամբ) պակաս է Ընթացակարգի առավելագույն գնի հիսուն տոկոսից, ինչպես նաև Ընկերության կողմից անհամապատասխանությունների շտկման ժամանակ ներկայացվել է ՍԸԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունը, հարկային հաշիվը, տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, սակայն բացակայում է ՍԸԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով պայմանագիրը, ինչն էլ չի քննարկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված

ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական փորձառություն:

Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվել «Էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում իրականացված համապատասխան աշխատանքների կատարման պայմանագրերը:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնագիտական փորձառության պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով

և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված շտկված փաստաթղթերը, արձանագրում եմ հետևյալը.

- 15.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/41-2 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի 15.02.2016թ. N 1 համաձայնագրով աշխատանքների գինը սահմանվել է 58 719 790 ՀՀ դրամ, սակայն հաշիվ- ապրանքագրերի և պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից կատարվել և պատվիրատուի կողմից ընդունվել են 57 455 604 ՀՀ դրամ գումարային արտահայտությամբ աշխատանքներ.

- 03.12.2015թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/35-1 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի 10.02.2016թ. N 2 համաձայնագրով աշխատանքների գինը սահմանվել է 22 900 000 ՀՀ դրամ, սակայն հաշիվ- ապրանքագրերի և պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից կատարվել և պատվիրատուի կողմից ընդունվել են 19 321 638,8 ՀՀ դրամ գումարային արտահայտությամբ աշխատանքներ.

- 07.07.2017թ. կնքված ՍԸԱՇՁԲ-10/9-4 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 2 481 240 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացվել են պայմանագրի գնին համապատասխան դուրս գրված հաշիվ-ապրանքագրեր և պայմանագրի արդյունքը հանձնելու մասին 25.12.2018թ. կնքված տեխնիկական ակտը:

Այսպիսով՝ Ընկերության կողմից ներկայացված վերոհիշյալ պայմանագրերի ընթացակարգերի հրավերներով ի թիվս այլ լիցենզիաների, պահանջվել է նաև էներգետիկ ոլորտի լիցենզիա: Միևնույն ժամանակ գտնում եմ, որ ՍԸԱՇՁԲ-10/41-2 և ՍԸԱՇՁԲ-10/35-1

պայմանագրերը չեն կարող դիտվել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար նմանատիպ (համանման) պայմանագրեր, քանի որ վերջիններիս շրջանակներում դուրս գրված հաշիվ-ապրանքագրերով և պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումներով նախատեսված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ չի համապատասխանում պայմանագրերով նախատեսված աշխատանքների համար սահմանված գնին և առկա չէ նշված պայմանագրերում գնի փոփոխություն կատարելու վերաբերյալ կողմերի միջև կնքված համաձայնագիր:

Ինչ վերաբերում է 16.02.2017թ. թիվ ԲԸԱՀԱՇՁԲ-10/1-1 ծածկագրով պայմանագրին, ապա գործում առկա նյութերից հնարավոր չէ պարզել, թե նշված պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների համար ինչ լիցենզիա է պահանջվել և արդյոք այն համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված լիցենզիային, թե ոչ:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում են առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական

փորձառություն» որակավորման չափանիշը բավարարելու մասով ներկայացված հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Աշխատանք» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11021-2019 գրությամբ «Աշխատանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Աշխատանք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**